

## Fest der Aufnahme Mariens in den Himmel Վերափոխումն Սուրբ Աստուածածնի



Das Fest der Aufnahme Mariens in den Himmel (arm. Werapochumn Surp Astvadzadzni) ist eines der 5 Hochfeste der Armenischen Kirche. Dies ist der Fall, weil die Mutter Gottes als „Mutter unseres Herrn und Heilands Jesus Christus“ für das Christentum und auch für die Armenische Kirche eine der größten Heiligen ist.

In der Armenischen Kirche wird das Fest der Aufnahme Mariens in den Himmel alljährlich am Sonntag, der dem 15. August am nächsten ist (wenn der 15. selbst nicht auf einem Sonntag fällt), gefeiert. Also zwischen dem 12. und 18. August. Andere Kirchen feiern dieses Fest am 15. August, unabhängig davon, ob es auf einen Sonntag fällt.

Nach der Kreuzigung Christi wohnte Maria gemäß des Auftrages Christi (s. Johannes 19, 26-27) bei dem Apostel Johannes und genoss dort seine liebevolle Fürsorge. Sie verbrachte ihre Zeit im Gebet und Fasten und besuchte oft das Grab seines Sohnes. Während eines dieser Besuche erscheint ihr der Erzengel Gabriel und verkündet ihr über ihren baldigen Übergang vom irdischen in den himmlischen Jerusalem. Maria teilt diese Nachricht den Aposteln mit und bittet sie, sie im Garten von Getsemani zu begraben.

Vor dem Tod bittet die Hl. Jungfrau Johannes, eine Eucharistiefeier abzuhalten, um ein letztes Mal die Hl. Kommunion zu empfangen und sich von allen zu verabschieden. Während der Verabschiedung wird das Zimmer mit einem unsagbarem Licht gefüllt und in diesem Licht erscheint ihr Jesus Christus.



Maria stirbt in Jerusalem 15 Jahre nach der Kreuzigung. Bei der Bestattung ihres Leichnams waren alle Apostel, außer Bartholomäus anwesend. Ahnend, dass Bartholomäus von der Nachricht ihres Todes sehr betroffen sein wird, übergab Maria dem Apostel Johannes ihr Bild mit der Bitte, es Bartholomäus zu geben. Bartholomäus gab sich jedoch mit dem Bild nicht zufrieden und bestand darauf, nach seiner Rückkehr nach Jerusalem Mariens Leichnam zu sehen. Die Apostel gingen erneut zum Grab, fanden aber ihren Leichnam nicht. Sie erinnerten sich an die Worte Christi, dass Maria den Tod nicht erleben, sondern in den Himmel auffahren wird. Das armenische Wort „Werapochum“ bedeutet „aufwärts gen Himmel fahren“.

Wie der armenische Geschichtsschreiber Movses Chorenatzi (5. Jh.) berichtet, hat der Apostel Bartholomäus das Bild Mariens mit sich nach Armenien gebracht. Es wurde im historischen Armenien im Nonnenkloster „Darbnutz Kar“ in der Provinz Antzewatziatz aufbewahrt.

Wie oben erwähnt ist für die Armenische Kirche Maria, die Mutter Gottes, die am höchsten geehrte Heilige und die erste „Fürsprecherin“ aller Gläubigen. Zahlreiche Lobeshymnen und Lieder sind ihr gewidmet und mehrere Kirchen in Armenien sowie in der Diaspora sind nach ihr genannt.

Anlässlich des Festes Maria Himmelfahrt werden in unseren Kirchen auch Weintrauben gesegnet, mit anderen Worten, die Jahresernte wird gesegnet. Diese sehr alte Tradition wird nicht nur von den Armeniern gepflegt, sondern auch von anderen Völkern.

Ein Armenier schenkte dem Tempel seine erste Ernte als Zeichen seiner Dankbarkeit und Anerkennung. Die heutige Traubensegnung stellt die Bewahrung dieser Tradition unserer Vorväter in der christlichen Kirche dar. Die Armenische Kirche bevorzugt die Weintraube als Symbol, weil Christus sich selbst mit dem Weinstock identifizierte. Ferner wird der Wein aus Trauben hergestellt, den Christus bei seinem letzten Abendmahl mit seinem Blut gleichsetzte und somit das Sakrament des Abendmahls (die Eucharistie) gründete, das wir heute in jedem Gottesdienst feiern. Dafür wird nur reiner Wein (ohne Beigabe von Wasser) verwendet. Auch nach der Trauung wird den Neuvermählten gesegneter Wein gereicht.

Es ist bei den Armeniern Tradition, vor dem Fest Maria Himmelfahrt und der Traubensegnung keine Weintrauben zu essen. In diesem Zusammenhang halte ich es für angemessen, die Worte des Katholikos, Karekin I. zu zitieren: „Traditionen sind die verbindenden Elemente der Identität der Völker, die, wenn sie ignoriert, vergessen oder verachtet werden, Farblosigkeit bewirken und Entstellung der Identität dieser Völker hervorrufen....“

*Im Ausland, wo die Armenier in der Verstreung leben, können sie sich keine geistige Zerstreung erlauben. Mit anderen Worten, man sollte keine Haltung der Gleichgültigkeit und des selbstzerstörerischen Übersehens gegenüber den eigenen heimatlichen Traditionen an den Tag legen. Halten wir mit der Welt Schritt, ohne aber von unserem Weg abzukommen....*

*Du begehst keine Todsünde, falls Du vor dem Fest zur Maria Himmelfahrt Trauben isst, und Du würdest auch nicht zur Hölle verdammt... Wenn Du solange wartest, bis die Kirche diese Trauben segnet, würdest Du nicht einmal eine Haaresbreite von der voraneilenden Welt zurückbleiben. Wenn Du aber entscheidest, Trauben nicht zu essen und es Dir nicht peinlich ist, Deinem Freund oder Nachbarn zu erklären, dass Du dies wegen Deiner Achtung der nationalen Traditionen tust, ist es Dein Volk, das in Dir zu Deinem nationalen Bewusstsein appelliert und Dich zur Bewahrung der Traditionen auffordert. Sei sicher, dass Du dadurch von den anderen nicht verachtet, sondern von gebildeten und selbstbewussten Menschen geachtet wirst.*

*... Vergiss niemals, dass für uns, die fern von unserem Heimatland leben, unsere eigenen Traditionen das Heimatland in unserem Leben sind....“*  
(Karekin I., Katholikos Aller Armenier, „Erkenne Dich selbst“)

### **Վերափոխումն Սուրբ Աստուածածնի**



Սուրբ Մարիամ Աստուածածնի Վերափոխման տօնը Հայ Եկեղեցու հիմնական 5 տաղավար տօներից մեկն է: Սա առելի քան բնական է, քանի որ Մարիամը որպէս մեր Տէր եւ Փրկիչ Յիսուս Քրիստոսի մայրը առանձնայատուկ տեղ է գրաւում քրիստոնէութեան եւ ի մասնաւորի Հայ Եկեղեցու մէջ՝ լինելով Եկեղեցու մեծագոյն սուրբերից մեկը:

Վերափոխման տօնը նշում է ամէն տարի օգոստոսի 15-ին մօտակայ կիրակի օրը (եթէ օգոստոսի 15-ը կիրակի չէ), այսինքն՝ 12 - 18 օգոստոս թուականների միջեւ:

Աստուածաշունչ սուրբ մատեանը շատ կցկտուր տեղեկութիւններ է պարունակում աստուածամօր եւ նրա կեանքի մասին: Նրա մասին տեղեկութիւնները, ի շարքս որոնց նաեւ Վերափոխման պատմութիւնը, մեզ են հասել Եկեղեցական բանաւոր Աւանդութեան միջոցով: Սրբազան այդ աւանդութեան համաձայն, Յիսուսի

խաչելութիւնից յետոյ Մարիամը ըստ իր Որդու պատուէրի (Յով. ԺԹ 26 - 27) ապրում է Յովհաննէս առաքեալի մօտ՝ վայելելով նրա սերն ու գուրգուրանքը: Շուրջ 15 տարի Աստուածամայրը անց է կացնում աղօթքի ու պահքի մէջ, յաճախ այցելելով իր Որդու գերեզմանը: Այդ այցելութիւններից մէկի ժամանակ նրան է յայտնում Գաբրիէլ հրեշտակապետը եւ աստուած Տիրամօր երկրային Երուսաղէմից երկնային վերին Երուսաղէմ վերափոխուելու լուրը: Աստուածամայրը այլ լուրը յայտնում է Յովհաննէսին եւ միսներին ու խնդրում իրեն թաղել Գեթսեմանիի ձորակում:

Մինչ իր ննջումը սուրբ կոյսը Յովհաննէս առաքեալից խնդրում է Սբ. Պատարագ մատուցել, որպէսզի ինքը վերջին անգամ ճաշակի Սուրբ Հաղորդութիւնը: Որից յետոյ Տիրամայրը ասանդում է իր հոգին: Երբ առաքեալները շրջապատում են նրա մահիճը, աննկարագրելի մի լոյս է ողողում սենեակը եւ այդ լոյսի մէջ երեւում է Յիսուս Քրիստոսը՝ շրջապատուած հրեշտակներով: Սուրբ կոյսի երկրային կեանքի վախճանը եկեղեցին բնութագրում է „ննջում“ եւ ոչ թէ „մահ“ բառով՝ հասկանալի դարձնելու համար նրա երկինք տեղափոխուած լինելը: „Վերափոխում“ բառը նշանակում է դէպի վեր, երկինք տեղափոխում կամ փոխադրում:

Առաքեալները, բացի Բարթողիմէոսից, կատարում են նրա թաղումը: Մարիամը մահից առաջ մտածելով, որ Բարթողիմէոսը շատ պիտի վշտանայ լսելով իր մահը, մահից առաջ Յովհաննէսին է տալիս իր կենդանագիր նկարը, որ յանձնուի Բարթողիմէոսին: Բայց Բարթողիմէոսը վերադառնալով փափագում է տեսնել Մարիամի մարմինը: Առաքեալները կրկին այցելում են գերեզման, բայց Մարիամի մարմինը այնտեղ չեն գտնում: Մտաբերում են Յիսուսին խոստումը, որ Մարիամը մահ պիտի չտեսնի, այլ պիտի տեղափոխուի երկինք:

Մովսէս Խորենացի հայոց պատմիչը (5-րդ դար) վկայում է, որ Մարիամի կենդանագիր նկարը Բարթողիմէոս առաքեալը իր հետ բերել է Հայաստան: Այն պահում էր պատմական Հայաստանի Անձեւացեաց գաւառի Դարբնոց քար կոչուած Կուսաստանի մէջ:

Սբ. Աստուածածնի Վերափոխման տօնախմբութեան առիթով մեր եկեղեցիներում կատարում է Խաղողօրհնէք, որով օրհնում են տարուայ բերքն ու բարիքը: Հայ Եկեղեցին նախապատուութիւնը տալիս է խաղողին, որովհետեւ Յիսուսը ինքն իրեն քանիցս համեմատել է որթատունկին: Խաղողից է պատրաստում գինին, որը Յիսուս Քրիստոսը Վերջին ընթրիքի ժամանակ նոյնացրեց իր արեան հետ եւ հաստատեց Հաղորդութեան խորհուրդը, որն էլ ներկայիս Սուրբ Պատարագի կորիզն է կազմում: Սբ. Պատարագի ընթացքում օգտագործում է խաղողի մաքուր եւ անխառն գինի: Սբ. Պսակի ընթացքին օրհնուած գինի է տրւում նաեւ նորապսակներին:

Հայերի մօտ սովորութիւն է խաղող չուտել մինչեւ Խաղողօրհնէք: Այս առնչութեամբ տեղին է մէջբերել Գարեգին Ա Վեհափառ Հայրապետի խօսքերը. „*Եթէ ողկոյզ մը խաղող ուտես Ս. Աստուածածնի Վերափոխման տօնէն առաջ՝ մահացու մեղք գործած չես ըլլար եւ դժոյք չես երթար...: Եթէ չուտես մինչ այն օրն, երբ Եկեղեցին կ'օրհնէ այդ խաղողը, աշխարհին հետ քայլ պահելէ մազաչափ մ'իսկ ետ չես մնար: Բայց եթէ որոշես չուտել, եւ անելին բարեկամիդ, դրացիիդ ըսելուն մէջ պզտիկութիւն չզգաս թէ՛ ազգային ասանդութեան սիրոյն է, որ չես ուտեր, ազգդ է որ քու մէջդ կ'արձագանգէ ազգային*

*գիտակցութեանդ եւ աւանդութեանդ պահպանութեանդ թելադրականութեամբ: Վստահ եղիր, չես արհամարհուիր ուրիշներէն, կրնաս միայն յարգուիլ բանիմաց եւ գիտակից անձերու շրջանակէն:*

*...Չմոռնաս երբեք, որ հայրենի հողէն հեռու ապրողներուս համար մեր իւրայատուկ աւանդութիւնները հայրենի հողն են մեր կեանքին մէջ“:*

Ինչպէս վերը նշուեց, Սուրբ Մարիամ, որպէս մայրը մեր Տէր եւ Փրկիչ Յիսուս Քրիստոսի, Հայ Եկեղեցու մեծագոյն սուրբն է եւ առաջին բարեխօսը բոլոր հաւատացեալների: Դարեր շարունակ Հայ Եկեղեցին ու հայ հաւատացեալը խորին յարգանք եւ երկիրաձօնութիւն են տածում Աստվածամօր հանդէպ՝ շեշտելով նրա՝ Աստծո մայր լինելու հանգամանքը, մաքրակենցաղութիւնը, անօրինակ խոնարհութեան ոգին, առաքինի վարքն ու նուիրուածութիւնը: Իսկ հայ կնոջ համար Ս. Կոյսը առաքինի, հաւատաւոր մօր, ընտանեկան սրբութեան պահպանի մարմնացումն է: Սուրբ Մարիամ Աստուածածինն են նուիրուել բազմաթիւ մեղեդիներ ու շարականներ, նրա անունով են կոչուել ու կոչուում բազմաթիւ հայկական եկեղեցիներ:



Մեր Տէրը Յիսուս Քրիստոս խաչի վրայ իր Հոգին աւանդելուց առաջ, ոչ միայն իր մօրն է յանձնում Յովհաննէս Առաքեալի խնամքին այլ նաեւ Սբ. Յովհաննէսին, որ այդ պահին խորհրդաւոր կերպով ներկայացնում էր Քրիստոսի Եկեղեցին, յանձնում է Սուրբ Կոյսի մայրական խնամքին (Յովհաննէս ԺԹ 26-27): Այս քայլով Յիսուսը Մարիամին նկատում է ոչ միայն իր մայրը, այլեւ ողջ եկեղեցու: Եւ մենք հաւատում ենք, որ Սուրբ Կոյսը առ այսօր շարունակում է իր մայրական խնամքը տարածել Եկեղեցույ վրայ ու իր սուրբ աղօթքներով ու խնդրանքներով բարեխօսել մեզանից իւրաքանչիւրի փրկութեան եւ բարօրութեան համար: Ուստի երբ հոգեւոր օգնութեան ու սփոփանքի կարիք ենք զգում, յիշենք բոլորս, որ երկնքի մէջ ունենք բարեխօս ու գործվագութ Տիրամայրը, որ պատրաստ է բարեխօսելու եւ մեր մեղքերի համար թողութիւն խնդրելու իր Միածին Որդու առջեւ:

*Vorebereitet von Serovpé Vartabed Isakhanyan – 2008 Hanau, BRD  
Պատրաստեց՝ Մերովբէ վարդապետ Բաախանեան – 2008 Հանաու, Գերմանիա*